

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեսուն տարի առաջ Իօհաննէսըուրդ քաղաքը Հարաւային Աֆրիկայում դեռ ևս գոյութիւն չունէր աշխարհիս վրայ և Վայտփօտերսրանդի շրջանը մի ամայի և անմարդաբնակ անապատ էր: Ո՛չ մի պետական անձը, որքան էլ հեռատես լինէր նա, որքան էլ ազգերի բախտը նախագուշակելու ձիրքով օժտուած լինէր, չէր կարող մարգարէանալ, որ Վայտփօտերսրանդի կամ, ինչպէս կրճատ կերպով անուանում են այժմ, Բանդի այդ ամայի անապատում կարճ ժամանակի մէջ սկիզբն կ'առնի ու կը զարգանայ մի բազմաբնակ, լայնահաս քաղաք, որին վիճակուած կը լինի տասն և իններորդ դարի վերջին երկու տարուայ ընթացքում ահագին քաղաքական դեր խաղալ մարդկային պատմութեան մէջ:

«Ուր գէշն եղիցի, անդ և ժողովեցին արծուիք»: Ազգերի համար այդ գէշը միշտ էլ եղել է ոսկին, և նրա շուրջը իրար գլուխ կոտրելով, իրար արնաշաղախ անելով հաւաքուել են արծիւները... Անցած դարի 80-ական թուականների սկզբում, երբ լուր տարածուեց, թէ Տրանսվալի հանրապետութեան Բանդի շրջանում գտնուել են առասպելական հարստութեան ոսկի հանքեր, աշխարհիս ամեն կողմերից, մանաւանդ Անգլիայից, թափուեցին այնտեղ բախտախնդիրներ՝ կարճ ժամանակուայ մէջ հարստութիւններ զիջելու զիտաւորութեամբ: Հիմնուեց Իօհաննէսըուրդ քաղաքը, որ տասը տարի իր սկզբնաւորութեան օրից յետոյ ունէր արդէն 102,708 բնակիչ, որոնք բացառապէս պարապում էին Բանդի հարուստ ոսկեհանքերի շահագործութեամբ: 1892 թուին այդ ոսկեհանքերից ստացուեց 1,210,868 ունց ոսկի, 1895-ին՝ 2,277,640 ունց, իսկ 1897-ին՝ 3,034,678 ունց, այսինքն աշխարհիս վրայ այդ թուականին ստացուած ոսկու ընդհանուր քանակութեան $\frac{1}{8}$ -ական մասից աւելի: Չը հաշուելով Աֆրիկայի սեամորթներին, որոնք կազմում էին քաղաքի ազգաբնակչութեան կէսը և որոնք օրավարձով

բանուորներ են, բնակիչների միւս կէսը բաղկացած է, ըստ մեծի մասին, անգլիացիներից—ոյսլենդերներից (օտարերկրացիներին)։

Բանդի չըջանի ապագայ կորստաբեր դերը Տրանսվալեան հասարակութեան համար չէին նախագուշակում և երկրի բնիկ տէրերը՝ բօէրները։ Այս նահապետական երկրագործ և խաչնարած ժողովուրդը, որ մոլեռանդութեամբ սիրում է իր դաշտն ու ագարակը, չը գրաւուեց ամենեւին ոսկեհանքերով հարստանալու հեշտ միջոցով, չը թողեց իր գիւղատնտեսական արդար աշխատանքը ի սէր ոսկեհանքերի, թէև նրանք գտնուում էին Տրանսվալի հողի վրայ։ Հանքագործութիւնը ամբողջովին անցաւ օտարների՝ ոյսլենդերների ձեռքը։

Բանն այն է, որ թէ բօէր գիւղատնտեսները և թէ հանքագործ գրամատները հաւասարապէս կարօտ էին սեամորթների աշխատանքին։ Բօէրները, որպէս ընդարձակ հողերի տէրեր, անկարող էին անձնական աշխատանքով կատարել այն ամենը, ինչ որ պահանջուում էր կատարել նրանց ագարակներում. այս պատճառով նրանցից ամեն մէկը պահում էր բազմաթիւ սեամորթ բանուորներ։ Նոյն բանուորները անհրաժեշտ էին և՛ հանքագործներին և առանց սեամորթների անհուշտ ոչ մի աշխատանք չէր կարող կատարուել հանքահորերում։ Սկսուեց կատաղի տնտեսական մրցում բօէր ագարակատէրերի և հանքագործ օտարների մէջ։ Ամեն մէկը նրանցից աշխատում էր իր կողմը գրաւել սեամորթ բանուորներին։ Իրանք սեամորթներն աւելի գերադաս էին համարում ծառայել բօէրների ագարակներում և մեծ գովաբութեամբ էին գնում Բանդի չըջանը, ուր բացի հանքահորերում ծառայելու տաժանելի աշխատանքից, նրանք անձնատուր էին լինում նաև արեւցողութեան ու ոգելից խմիչքների տալիս իրանց վերջին կարողութիւնները։

Բանուորներ գրաւելու համար՝ հանքագործները ստիպուած էին շարունակ աւելացնել բանուորական օրավարձը, այսինքն շարունակ պակասեցնել իրանց արդիւնքները։ Տնտեսական մրցումը քանի գնում, աւելի ևս սաստկանում էր գիւղատնտեսների՝ երկրի տէրերի և օտար հանքագործների մէջ։ Տրանսվալի հանրապետական կառավարութիւնը, բնականաբար, ամեն կերպ աշխատում էր պաշտպանել գիւղատնտեսութեան շահերը ի վնաս հանքագործների։ Մի շարք օրէնքներով նա մաքսային բարձր սակագներ էր նշանակել գիւղատնտեսութեան օտար արդիւնքների վրայ՝ ներքին արդիւնարեւութիւնը հովանաւորելու նպատակով, նշանաւոր չափով տուրք էր վերցնում հան-

քային արդիւնքներից և այդ գումարներով օգնութեան հասնում գիւղատնտեսներին:

Հանքագործների դրութիւնն աւելի ևս ծանրացնում էր այն հանգամանքը, որ ոսկու վերին շերտերը հետզհետէ սպառւում էին, հարկաւոր էր փորել աւելի խորը՝ ստորին շերտերին հասնելու համար, հարկաւոր էր աւելի աշխատանք գործ դնելուց զատ՝ գործածել նաև աւելի կատարելագործուած մեքենաներ, ուրենմ և հետզհետէ աւելացնել ծախսերը: Հանքագործական մօտ 300 ընկերութիւններից շատերը հարկագրուած էին պակասեցնել այն առատ դիվիդենտները, որ նախկին տարիներում տալիս էին նրանք իրանց բաժնետէրերին: Հանքագործութիւնը, չնորհիւ այս հանգամանքների, դիմում էր դէպի անկումը՝ սպառնալով ի կորուստ մատնել այն ահագին դրամագլուխները, որոնք դրուած էին Բանդի ոսկեհանքերը շահագործելու վրայ: Անհրաժեշտ էր դիմել մի արտակարգ միջոցի՝ վերահաս կորստից ազատուելու համար:

Ի հարկէ, եթէ գիւղատնտեսների և արդիւնագործների մրցումը սահմանափակուէր լոկ տնտեսական ասպարէզով, այն ժամանակ այդ կարգը կը ստանար այն կերպարանքը միայն, ինչ կերպարանք որ ունի նա այժմ, օրինակ, Գերմանիայում, ուր նոյնպէս կատաղի մրցումն կայ խոշոր կալուածատէրերի և արդիւնագործների մէջ: Ինքն ըստ ինքեան տնտեսական մրցումը չէր կարող դառնալ զինուորական ընդհարման անմիջական պատճառ, եթէ նրան չը նպաստէին այլ քաղաքական հանգամանքներ, բայց և այնպէս տնտեսական մրցումը բօշրնների և ոյտլինդէրների մէջ տարածայնութիւնների այն սկզբնական շարժառիթն էր, որի շուրջը փաթաթուեցին ապա քաղաքական հարցերը. հարցեր, որոնք վաղուցուանից ի վեր գոյութիւն ունէին Տրանսվալի և Անգլիայի մէջ և որոնք արդէն մի անգամ, 1881 թուին պատճառ էին դարձել զինուորական ընդհարման այդ երկու պետութեան մէջ:

Փոքրիկ և աննշան Տրանսվալում անգլիացին գտնւում էր այնպիսի դրութեան մէջ, որին բոլորովին սովոր չէր նա, որ բոլորովին չէր համապատասխանում նրա պատմական տրադիցիաներին: Բօշրը երկրի տէրն էր և կարգադրիչը, իսկ, անգլիացին կատարում էր հպատակի դեր: Եւ անհանգստացի հանքագործները 1895 թուին կազմեցին մի գաղտնի դաւադրութիւն, իրանց պարագլուխ ունենալով «Աֆրիկայի Նապօլէօն»՝ Սեսիլ Բոզալին, ու մի հարուածով կամեցան տապալել բօշրների պետութիւնը և երկրի իշխանութիւնը առնել իրանց ձեռքը: Հէնց այդ գաղտնի դաւադրութեան արդիւնք էր դօկտօր Ջէմսօնի յայտնի արշա-

ւանքը դէպի Տրանսվալ, որ վերջացաւ ամօթալի պարտութեամբ անգլիացիներին համար: Դոկտօր Ջէմսօնը իր 800 զինակիցներով գերի ընկաւ գններալ Կրօնիէի ձեռքը և 64 զաւաղրներ ձերբակալուեցին ու բանտարկուեցին Իօհաննէսբուրգում:

Ջէմսօնի արշաւանքը շատ բան պարզեց թէ բօէրների և թէ անգլիացիների համար: Ջէմսօնի մօտ գտնուած թղթերից, որ նա չէր կարողացել կամ չէր կամեցել ոչնչացնել, բօէրները պարզապէս տեսան, որ զաւաղրութեան մէջ խառն էր և անգլիական կառավարութիւնը. նրանք հասկացան, որ Անգլիայի ձգտումն է վերջ ի վերջոյ գրաւել ու ոչնչացնել Տրանսվալի հանրապետութիւնը, և վաղ թէ ուշ իրանք օրհասական պայքար են մղելու Անգլիայի դէմ իրանց անկախութիւնը պաշտպանելու համար. իսկ Տրանսվալի անգլիացիները հասկացան, որ տեղական միջոցներով, առանց անգլիական զօրքերի օգնութեան, նրանք անգոր են բօէրների առաջ: Այդ 1895 չարաբախտ տարուանից սկսած թէ բօէրները և թէ անգլիացիները կազմում են ապագայ գործունէութեան ծրագիր և ամեն մէկը նրանցից ամենայն եռանդով աշխատում է իրագործել իր ծրագիրը:

Բօէրների ծրագիրն էր զինել երկիրը կատարելագործուած զէնքերով, որքան կարելի է առատ և գաղտնաբար, առանց ցոյց տալու Անգլիային, որ Տրանսվալը զինուում է. ոյտլենդէրների և նրանց պարագլուխների ծրագիրն էր զրգուել Անգլիայի հասարակական կարծիքը բօէրների դէմ գլխաւորապէս կաշառուած մամուլի մի ահագին բանակի միջոցով: Երկու կողմերը ևս գործում էին եռանդով: Եւ ահա 1899 թուին, Անգլիան, առիթ բռնելով ոյտլենդէրների պահանջը ընտրողական իրաւունքներ տալու նրանց Տրանսվալում, Տրանսվալի բնիկներին դրեց այնպիսի դրութեան մէջ, որ նրանք, իրանց հայրենիքի մօտալուտ կորուստը նախատեսելով, ստիպուած էին դիմել մի վերջնական միջոցի, որից խուսափելն անհնարին էր այլևս: Անգլիան կարկադղել էր արդէն 50,000 զօրք ուղարկել դէպի Հարաւային Աֆրիկա և պատրաստուում էր կլանել բօէրների անկախութիւնը: Բացի սրանից՝ բանակցութիւնների ընթացքից, որ տեղի ունէին ոյտլենդէրներին ընտրողական իրաւունքներ տալու հարցի վերաբերմամբ Տրանսվալի և Անգլիայի մէջ, բօէրները պարզապէս համոզուեցին, որ ոչ մի զիջումն չէ կարող գոհացնել Անգլիային և որ նա անդառնալի կերպով նախաորոշել է Տրանսվալի բախտը, կամենալով ձեռք գցել մի այնպիսի երկիր, որ նախ՝ համարեա ամեն կողմից չըջապատուած է բրիտանական տիրապետութիւններով և խախտում է այդ տիրա-

պետութիւնների ամբողջացումը և երկրորդ լի է մեծահարուստ հանքերով: Չը կամենալով առանց պայքարի զրկուել մի այդպիսի անգնահատելի բարիքից, որպիսին է հայրենիքի անկախութիւնը, բռնները՝ մասամբ յոյսերն իրանց վրայ դրած, մասամբ կապի և նատալի հօլլանդացիների և մասամբ Եւրոպայի միջամտութեան վրայ՝ 1899 թուի հոկտեմբերի 11-ին պատերազմ յայտնեցին Անգլիային: Տրանսվալի միացաւ և հարեան Օրանժեան հանրապետութիւնը՝ այն դաշնակցութեան զօրութեամբ, որ նախապէս կապուած էր այդ երկու ցեղակից հանրապետութիւնների միջև:

Մենք երկար կանգ չենք առնի անգլո-բօերական պատերազմի մանրամասնութիւնների վրայ, նրանք արդէն յայտնի են լրագրիւններից: Կը յիշենք միայն, որ համարեա մի ամբողջ տարի և կէս տևող պատերազմը բաժանուեց երկու գլխաւոր շրջաների: Առաջին շրջանն սկսուեց պատերազմի սկզբից և տևեց մինչև 1900 թուի մարտի 1-ը: Այս ժամանակամիջոցում պատերազմական բախտի աջողութիւնը անընդհատ բռնների կողմն էր. նրանք պաշարեցին Լէդի-Սմիտ, Կիմբերլէյ և Մեֆկինգ քաղաքները, տարան փառաւոր յաղթութիւններ անգլիական հողի վրայ, Ստրոմբէրգի մօտ՝ գեներալ Գատէզերի զօրքերի դէմ, Մագերաֆօնգէնի մօտ՝ լօրդ Մեթուէնի զօրքերի դէմ և Տագելա գետի ափերին՝ գեներալ Բուլլէրի զօրքերի դէմ: Բօէր կամաւորների այս յաղթութիւնները ապշեցրին և հիացմունք պատճառեցին բոլոր ազգերին: Նոյնիսկ անգլիացիները խոստովանուեցին, որ այդպիսի խիստ պարտութիւններ նրանք չէին կրել դեռ ևս ամբողջ XIX դարի ընթացքում:

Պատերազմի երկրորդ շրջանն սկսուեց 1900 թուի մարտի 1-ից, գեներալ Կրօնիէի գերութեան օրից, և տևում է մինչև այսօր: Այդ շրջանում պատերազմի բախտը թեքուեց անգլիացիների կողմը, գլխաւորապէս այն պատճառով, որ Անգլիան հարաւային Աֆրիկա ուղարկեց 220,000 զինուորից բաղկացած մի ահագին բանակ՝ հմուտ զօրավար լօրդ Բօքսթաութի առաջնորդութեամբ, որի դէմ բռնները հազիւ 30—35,000 զինուոր ունէին: Պատերազմի կերպարանքը փոխուեց բոլորովին. մեծ բանակներով, ճակատ առ ճակատ մղուող կռիւներից յետոյ՝ նա ընդունեց պարտիզանական պատերազմի կերպարանք: Հասկանալի է, որ բօերական փոքրիկ զօրաբաժինները չէին կարող արգելք դառնալ անգլիացիներին խուժելու դէպի Օրանժեան հանրապետութիւնը և Տրանսվալ, և լօրդ Բօքսթաութ հետզհետէ գրաւեց Բլումֆօնտէն, Իօհաննէսբուրգ, Պրետորիա և այն բոլոր քաղաքները, որոնք գտնուում են երկաթուղային գծերի վրայ:

Բօէրները իրանց յաղթուած ճանաչեցին և երկու հանրապետութիւնների նախագահների միջոցով դիմեցին Անգլիայի մինիստր-նախագահ Սօլսբերիին հաշտութիւն խնդրելու՝ այն պայմանով միայն, որ բօէրական հանրապետութիւնների անկախութիւնը պահպանուած լինի, սակայն Սօլսբերի մերժեց ընդունել այդ պահանջը և յայտնեց, որ բօէրները պէտք է ենթարկուեն Անգլիային առանց որ և է պայմանի։ Վերջապէս Անգլիան ի լուր աշխարհի յայտնեց իր թագցրած ցանկութիւնը և այս փաստը պերճախօս ապացոյց է, որ ոչալենդէրներին ընտրողական իրաւունքներ տալու պահանջը լոկ պատրուակ էր միայն և պատե-րազմի առիթ։

Բայց բօէրները չը յուսահատուեցին. նրանք որոշեցին ան-ընդհատ շարունակել պատերազմը և միեւնոյն ժամանակ պատ-գամաւորներ ուղարկել Եւրոպա և Ամերիկա՝ պետութիւնների միջամտութիւնը խնդրելու համար։ Տրանսվաալեան և Օրան-ժեան հանրապետութիւնների պետական գործիչներից բաղկա-ցած այդ պատգամաւորութիւնը ոչ մի աջողութիւն չը գտաւ թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում։ Անգլիայի այն ազգարա-րութիւնից յետոյ, որով նա յայտնեց, թէ ամեն մի միջամտու-թիւն օտար պետութիւնների կողմից անգլո-բօէրական հար-ցում նա կը համարէ թշնամական վերաբերմունք դէպի Անգ-լիան։ Այդ անյաջողութիւնից յետոյ բօէրները ուղարկեցին Եւ-րոպա նոյն նպատակով Տրանսվաալի ծերունի նախագահ Պաուլ Կրիւգէրին։ Սակայն նշանաւոր ծերունին հանդիպեց նոյն անա-ջողութեան։ Ուղիղ է, Ֆրանսիայում, Գերմանիայում և Հօլլան-դիայում ժողովուրդն ընդունեց նրան բուռն և անսահման ոգե-ւորութեամբ, արտայայտելով եւրոպական ցամաքի բոլոր ազգերի զգացմունքները, բայց կառավարութիւնները այդ երեք երկրնե-րում ևս ձեռնպահ մնացին, իսկ գերմանական կայսրը հռչա-կեց իրան նաև նրանով, որ չընդունեց այդ մեծ հայրենասէրին և Կեօլնից յետ դարձրեց նրան... Եւրոպան պարզ և ակնյայտնի կերպով ցոյց տուեց դրանով իր բարոյական անմիճելի սնան-կութիւնը։

Եւ մինչև այսօր այդ առասպելական հերոս ժողովուրդը շարունակում է կուռել, կուռել՝ չը նայելով այն անգութ և ան-խիղճ միջոցներին, որոնց դիմում են անգլիացիները նրան զըս-պելու համար, չը նայելով այն բոց ու հրդեհին, որին մատնուած են նրանց ազգաբալները, չը նայելով այն անլուր տանջանքնե-րին, որոնց ենթարկուած են նրանց կանայք և երեխաները։

Ոճիրներով լի XIX դարի ամենապերճին ոճիրն էր այդ պատերազմը։

Տասն և իններորդ դարը թողեց քսաներորդին մաքրելու և մի այլ քաղաքական կնճռոտ հաշիւ—չինական հարցը։ Այդ հարցը նոր է։ դա մի դարաւոր հարց է, որ անցեալ 1900 թուականին ստացաւ մի առանձին սուր կերպարանք։ Սկսած այն հին օրերից, երբ եւրոպացի միսիօնարը առաջին անգամ ոտք կոխեց չինական հողի վրայ՝ իր հետ աւետարանական արտաքին ծիսապաշտութեան հետ միասին տանելով նաև եւրոպայի անկուշտ վաճառականին, չինական հարցը ծնունդ առաւ և մտաւ խանձարուր։ Որքան աւելի բազմացան միսիօնարները՝ Քրիստոսի այդ սուտ-աշակերտները Չինաստանում, որքան աւելի կրկնապատկուեց նրանց յանդգնութիւնը չինական կրօնի և ժողովրդական շահերի դէմ, որքան աւելի եւրոպացի վաճառականը պարզեց իր հողին չինական ժողովրդի և կառավարութեան առաջ՝ չրջելով չինական բաց նաւահանգիստներում օպիումի, հրազէնքերի կասկածելի որակութեան ապրանքների և դիպլոմատիական սպառնալիքների անհուն քանակութեամբ զինուած, այնքան աւելի չինական հարցը աճեց ու զարգացաւ։ չինական ժողովրդի զգուհների և անսահման ատելութեան հողի վրայ դէպ ի օտարերկրացիները։ Իր դարաւոր յարաբերութիւններից եւրոպական քաղաքակրթութեան այդ կարապետների հետ՝ չինական խաղաղ, աշխատասէր, թէև յետամնաց, բայց ոչ անխելք ժողովուրդը այն համոզմունքը դուրս բերեց, որ օտարները բացի մեասից, ոչինչ օգուտ չեն տալիս Չինաստանին, որ նրանք ոչ թէ իսկական բարիք, այլ նոյնիսկ բարեացակամութեան զգացմունքի նշոյլ անգամ չեն ցոյց տալիս դէպի չինական ժողովուրդը։

Այս համոզմունքը աւելի ևս արմատացաւ նրանց մէջ չինեապօնական պատերազմից յետոյ, երբ եւրոպական պետութիւնները տեսնելով այդ հսկայ ժողովրդի զինուորական անզօրութիւնը, չը բաւականանալով առևտրական այն մեծ օգուտներով, որ նրանք ստանում էին չինացիներից, մէկը միւսից յետոյ սկսեցին գրաւել չինական երկրի զանազան մասերը։ Չինական ժողովրդի համբերութեան բաժակը լցուեց. նա պարզապէս տեսաւ, որ եւրոպացիները ձեռնամուխ եղան մի այնպիսի գործի, որի հետևանքը անխուսափելի կերպով պիտի լինի չինական պետութեան անկումը, այն պետութեան, որ իր անկախ գոյութիւնը պահպանել է անյիշելի ժամանակներից ի վեր։ Կազմուեց Չինաստանում 'ի թիւս այլ ընկերութիւնների նաև մի բազմանդամ ընկերութիւն՝ «Մեծ-բոունցը» անունով, որի նպատակն էր դուրս անել Չինաստանից բոլոր օտարերկրացիներին և ազատել երկիրը մօտալուտ կորուստից։

Կազմակերպուած էր արդեօք այդ շարժումը չինական կա-

ռաւարութեան և չինական պետական անձերի կողմից, թէ դա լոկ ժողովրդական շարժում էր, որին ապա հարկադրուած միացաւ և չինական կառավարութիւնը, չէ կարելի առայժմ հաստատալէս ասել. անկասկած է միայն այն, որ չինական պետական գործիչների և մանդարինների մէջ կային բազմաթիւ անձինք, որոնք տեղեակ էին պատրաստուող յեղափոխութեանը և ամեն կերպ քաջալերում ու աջակցում էին «Մեծ-բուռնցքներին»։ Այդ դերում նշանաւոր հանդիսացաւ մանաւանդ իշխան Տուան, որ չինական այժմեան թագաժառանգի հայրն է և որ, նոյնիսկ ի սէր իր որդու, պէտք է աշխատէր փրկել չինական գործը կործանումից։

Թէ ինչպէս էին նայում չինական պետական անձինք «Մեծ-բուռնցքի» շարժման վրայ, այդ երևում է չինական կայսրի եղբայր իշխան Չուանի խօսքերից որ հաղորդեց ռուսաց հեռագրական գործակալութիւնը Պեկինից դեկտեմբերի 31-ին. «Մեծ-բուռնցքի» շարժումը, ասուած է հեռագրի մէջ, իշխան Չուան անուանում է հայրենասիրութիւն։ Օտար ազգերը շատ տարիներ շարունակ աշխատում էին առետրական արտօնութիւններ ձեռք բերել, և ձեռք բերելով այդ արտօնութիւնները՝ օգուտներ ստացան, հարստացան և փաթաթեցին Չինաստանի վրին անձեռնտու դաշնագրեր, սպառնալով հակառակ դէպքում խլել երկրի ամենալաւ մասերը։ Չինական ժողովրդի զայրուիլը հետզհետէ գրգռում էր Վէյ-Սայ-Վէյի և միւս չրջանների կորստեամբ։ Չինացիները վարուեցին ոչ աւելի վատ, քան Ֆրանսիացիները մեծ յեղափոխութեան ժամանակ։ Չինացիներ ամենախաղաղ ժողովուրդն է աշխարհիս վրայ։ Այսպիսի շարժումներ, ինչպէս էր ներկայ շարժումը, չեն կրկնուում երեւի, մի դարի ընթացքում»։

Եւ յիշաւի, իշխան Չուան չէ մեղանչում ճշմարտութեան դէմ։

Չարմանալին այն է, որ օտարերկրեայ պետութիւնների դեսպանները շատ քիչ տեղեկութիւններ ունէին «Մեծ-բուռնցք»-ի պատրաստութիւնների մասին և չէին նախատեսում այն մեծ վտանգը, որ սպառնում էր ոչ միայն պետութիւնների շահերին ընդհանրապէս, այլ և մասնաւորապէս իրանց՝ դեսպաններին։ Փոխաբարձ նախանձի, ինտրիգների և մրցութեան տենդով բռնուած՝ նրանք նկատեցին վտանգը միայն այն ժամանակ, երբ նա արդէն կոխել էր դեսպանատների շէմը և երբ նրա առաջն առնել անհնարին էր։ Պետութիւնների ղինուորական նաւերից դեսպանատների պաշտպանութեան համար Պեկին հասած

փոքրաթիւ պահակախումբը աւելի ևս զրգոնց չինացիների զայրոյթը, և պատերազմն սկսուեց Չինաստանի ու օտարերկրեայ պետութիւնների մէջ՝ առանց այդպիսի դէպքերում ընդունուած ձևական պահանջների կատարման: Պեկինի օտարերկրեայ դեսպանատները ենթարկուեցին պաշարման «Մեծ-բուռնցքի» և չինական կանոնաւոր զորքերի կողմից. պաշարման հէնց սկզբում տեղի ունեցաւ գերմանական դեսպան Կէտտելերի սպանումը:

«Մեծ-բուռնցքի» նշանաբանն էր արտաքսել Չինաստանից բոլոր օտարերկրացիներին, ոչնչացնել դաշնագրերը, յետ առնել նոյն երկիրները, որոնք գրաւուած էին եւրոպական պետութիւններից և փակել Չինաստանի մուտքը օտարների առաջ: Գրգռուած և կատաղած ամբոխն ամենից առաջ իր զայրոյթի հարուածները ուղղեց օտարերկրեայ այն տարրի դէմ, որ տարիների ընթացքում ամենից աւելի ատելի էր դարձել նրան— միսիօնարների դէմ, որոնցից շատերը Չինաստանի զանազան շրջաններում զոհ գնացին ժողովրդի անզուսպ վրէժինդրութեան: Նրանց եկեղեցիները հրդեհուեցին, վանքերը կողոպտուեցին, մենաստանները աւերուեցին և միայն սակաւ շրջաններում, որոնց նահանգապետները չէին համակրում «Մեծ-բուռնցքի» շարժմանը, նրանք կարողացան ազատ մնալ ամբոխի հալածանքներից: Միսիօնարներին հետ միասին հալածոււմ և կոտորոււմ էին նրանց արքանախնները՝ չինացի քրիստոնեաները, որոնց վրայ չինական հայրենասէրները իրաւամբ նայոււմ էին որպէս ներքին թշնամիների վրայ:

Չինական կանոնաւոր զօրքը, միացած «Մեծ-բուռնցք»-ի կամաւորների բազմութեան հետ, յարձակուեց նաև չինական-աւրեւելեան երկաթուղային նոր շինուող գծի վրայ և ստիպեց ուսել ինժեներներին և բանուորներին հեռանալ Չինաստանի սահմաններից:

Պարզ է, որ օտարերկրեայ պետութիւնները չէին կարող անպատիժ թողնել չինական կառավարութեան և ամբոխի այս արարքները, որոնք համարոււմ էին լոկ միայն չինական ազգի վայրենութեան և երախտամոռութեան նշան դէպի իրանց եւրոպացի բարերարները: Բայց ամենից առաջ պետութիւնների հոգսն ու մտածման առարկան էր ազատել պաշարումից Պեկինի դեսպանատները, ուր դեսպանների հետ միասին փակուած և վտանգի էին ենթարկուած նրանց ընտանիքները, դեսպանատներին միւս բազմաթիւ անդամները և փոքրաթիւ պահակախումբը, որոնցից արդէն ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն չէր ստացոււմ ոչ միայն եւրոպայում, այլ նաև չինական ծովափնեայ քա-

շաքներում, ուր ապրում էին բազմաթիւ եւրոպացիներ: Պաշարումը տեւեց ամբողջ երկու ամիս, սկսած յունիսի 3-ից մինչև օգոստոսի 2-ը և միայն այս վերջին ամսի 3-ին եւրոպական միացեալ զօրքերին՝ ռուս զենեքալ լինելիչի հրամանատարութեամբ, աղողուեց գրաւել Պեկինը և ազատել զեսպանատները պաշարումից:

Չինական արքունիքը Պեկինի գրաւումից երկու օր առաջ թողեց մայրաքաղաքը և հեռացաւ դէպի երկրի խորքերը, դէպի Սինաֆու:

Եւրոպացիները բաժանեցին Պեկինը զանազան մասերի, տեղաւորուեցին Պեկինում ինչպէս իրանց սեփական տանը և սկսեցին արիւնով ու սրով խաղաղացնել Չինաստանը:

Սակայն այդ գործի մէջ ամենից աւելի մեծ փառք ու պատիւ վերապահուած էր գերմանական Ֆէյլդմարշալ կօմս Վալդերզէէին, որ գերմանական կայսրի պաշարկութեամբ և միւս պետութիւնների համաձայնութեամբ ստանձնեց օտարերկրեայ զօրքերի գլխաւոր հրամանատարի պաշտօնը Չինաստանում՝ յանձնարարութիւն ստանալով Վիլհելմ II-ից չը խնայել ոչինչ և ոչ ռբի, նոյնիսկ անձնատուր եղած գերիներին: Եւ գերմանացի Ֆէյլդմարշալը, Չինաստան հասնելով, ապացուցեց, որ նա առաջնակարգ կարգապահ զինուոր է և ամենայն սրբութեամբ գիտէ կատարել իր իշխանաւորի հրամանը: «Պատժողական արշաւանքների» մի ահագին շարքով նա հիմնահատակ կործանեց և աւերեց այն բոլոր երկիրները, ուր միայն կարող էր հասնել եւրոպացու ոտքը: Չինացի անհամար ամբոխ զոհ դնաց նրա սառնասիրտ վրիժառութեանը, որ չը գիտէր ջողել մեղաւորին անմեղից, երիտասարդին ծերից, սպառազէն պատերազմողին զինաթափ գթութիւն հայցողից:

Եւ Չինաստանում տիրեց համեմատական խաղաղութիւն...

Չինական կանոնաւոր զօրքն ու «Մեծ-բուռնք»-ները վերջնականապէս ջարդուեցին, թեպէտ և նրանք զինուած էին ամենանոր տեսակի հրացաններով և թնդանօթներով և ունէին ռազմամթերքի ահագին պաշար: Չինացի խաղաղ աշխատասէր, իր գիւղատնտեսական պարապմունքներին մոլեռանդութեամբ նուիրուած ժողովուրդը բաւականաչափ ժամանակ չէր ունեցել զինավարժուելու, որպէսզի կարողանար գէթ հեռաւորապէս համեմատուել եւրոպական աշխարհակալների հետ, որոնց ամբողջ ուշքը կեդրոնացած է զօրքի և նրա զինավարժութեան վրայ: